**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
17 հունիսի 2025 թվականի N 923-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 98/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՅԱԶԵՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 17.01.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, 20.01.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 98/1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.07190 հա, որը Ռուբիկ Գուրգենի Յազերյանին /ծնված 26.12.1960թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07190 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 98/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռուբիկ Գուրգենի Յազերյանին /ծնված 26.12.1960թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և

սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.07190 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց, 98/1 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 հունիսի 2025 թվականի N 924-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 121-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերություն հետ կատարել տարածքների փոխանակություն:
2. Գավառ համայնքի Գանձակ գյուղի Հ. Բաղրամյան փողոց 2 հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան առաջին հարկի կենտրոնական մուտքից ձախ առաջին սենյակը, որը փաստացի օգտագործվում է «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից, փոխանակել նույն շենքի երկրորդ հարկում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող սենյակի հետ:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքելու տարածքների փոխանակության պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 925-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 120-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Նորատուս գյուղի Սևանիփողոց 3-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող 1048,7 (մեկ հազար քառասունութ ամբողջ յոթ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքը, կաթսայատունն ու շինությունների զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,4689 (զրո ամբողջ չորս հազար վեց հարյուր ութսունինն տասհազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքելու անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 926-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 119-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Նորատուս գյուղի Սևանիփողոց 3-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող 657,7 (վեց հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքը, կաթսայատունն ու շինությունների զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,349 (զրո ամբողջ երեք հարյուր քառասունինն հազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Նորատուսի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Նորատուսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքելու անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2025 թվականի N 927-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 118-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Սարուխան գյուղի Մ. Խորենացու փողոց 32 հասցեում գտնվող 713,1 (յոթ հարյուր տասներեք ամբողջ մեկ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքն ու շենքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեցված 0,021047 (զրո ամբողջ քսանմեկ հազար քառասունյոթ հարյուրհազարերրորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքելու անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
17 հունիսի 2025 թվականի N 928-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 117-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Սայադյան փողոց 110 հասցեում գտնվող 965,3 (ինն հարյուր վաթսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քմ ներքին մակերեսով շենքն ու շենքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,0793 (զրո ամբողջ յոթ հարյուր իննսուներեք տասհազարերրորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Գավառի Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտ) անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ արտադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին «Գավառի Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտ) անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի հետ կնքելու անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2025 թվականի N 929-Ա

## ԳԱՎԱՌ Ք ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 21-ՐԴ ՓՈՂՈՑ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄՈՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԵՎԵՅԱՆԻ, ՍԱՅԱԹ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԿԵՎԵՅԱՆԻ, ԲԱԼԱՍԱՆ ԺՈՐԱՅԻ ՄԻՐԻԲՅԱՆԻ, ՌԻՄԱ ՍԻՄՈՆԻ ԿԵՎԵՅԱՆԻ, ՎԼԱԴԻՄԻՐ ՍԻՄՈՆԻ ԿԵՎԵՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 20.05.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Ազատության 21-րդ փողոց 2 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /լրացուցիչ վկայագիր՝ տրված 26.05.2025թ./ Սայաթ Վոլոդյայի Կևեյանի /ծնված 02.01.1964թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ քաղաքի Ազատության 21-րդ փողոց 2 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.07 հա, ինչը փաստացի կազմում է 0.07158 հա, որը Սայաթ Վոլոդյայի Կևեյանին /ծնված 02.01.1964թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ 0.07158 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Ազատության 21-րդ փողոց 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սիմոն Վլադիմիրի Կևեյանի /ծնված 02.02.1959թ-ին/, Սայաթ Վոլոդյայի Կևեյանի /ծնված 02.01.1964թ-ին/, Բալասան Ժորայի Միրիբյանի /ծնված 15.03.1966թ-ին/, Ռիմա Սիմոնի Կևեյանի /ծնված 17.09.1985թ-ին/, Վլադիմիր Սիմոնի Կևեյանի /ծնված 20.01.1988թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.07 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00158 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.07158 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ քաղաք, Ազատության 21-րդ փողոց, 2 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 930-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն աճուրդային կարգով օտարելու մասին» Գավառ համայնքիւ ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 122-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ տրանսպորտային միջոցներն աճուրդային կարգով օտարելու նպատակով 2025 թվականի հուլիսի 23-ին հայտարարել աճուրդ.
1) TOYOTA CAMRY 2,4 – թողարկման տարեթիվը՝ 2010թ., պետհամարանիշը՝ 990 CC 61
2) VAZ 21906 - թողարկման տարեթիվը՝ 2014թ., պետհամարանիշը՝ 996 CC 61
3) NIVA VAZ 21214 - թողարկման տարեթիվը՝ 2008թ., պետհամարանիշը՝ 988 CC 61
4) MITSUBISHI MONTERO-SPORT-3,5-թողարկման տարեթիվը՝ 2001թ., պետհամարանիշը՝ 989 CC 61
5) GAZ 3102 - թողարկման տարեթիվը՝ 1998թ., պետհամարանիշը՝ 997 CC 61
6) GAZ 3110 - թողարկման տարեթիվը՝ 2000թ., պետհամարանիշը՝ 651 CG 61

2. Տրանսպորտային միջոցների համար որպես աճուրդի մեկնարկային գին սահմանել հետևյալ շուկայական արժեքները.
1) TOYOTA CAMRY 2,4 – 2 300 000/երկու միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ
2) VAZ 21906 – 1 453 000 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամ
3) NIVA VAZ 21214 – 813 000 /ութ հարյուր տասներեք հազար/ ՀՀ դրամ
4) MITSUBISHI MONTERO-SPORT-3,5-1 353 000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամ
5) GAZ 3102- 501 000 /հինգ հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ
6) GAZ 3110- 145 000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ

3. Հանձնարարել աճուրդային հանձնաժողովին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 931-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 116-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Ազատության փողոց 1-ին նրբանցք 2-րդ փակուղի 3 հասցեում գտնվող 05-001-0289-0118 կադաստրային ծածկագրով անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու համար 2025 թվականի հուլիսի 22-ին հայտարարել աճուրդ:
2.Անշարժ գույքի աճուրդի համար մեկնարկային գին սահմանել 14 009 000 /(տասնչորս միլիոն ինն հազար/ ՀՀ դրամ:
3.Հանձնարարել աճուրդային հանձնաժողովին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
17 հունիսի 2025 թվականի N 932-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 116-Ա որոշումը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակ N 2/2 հասցեում գտնվող 05-001-0024-0021 կադաստրային ծածկագրով 18,6 (տասնութ ամբողջ վեց տասնորդական) քմ մակերեսով անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու համար 2025 թվականի հուլիսի 22-ին հայտարարել աճուրդ:
2.Անշարժ գույքի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել 4 548 000 (չորս միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ:
3.Հանձնարարել աճուրդային հանձնաժողովին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 933-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 40 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԹԵԼԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԳՆԵԼ ԱՐԱԳԱԾԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 04.03.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 26.05.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 40 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.13 հա, ինչը փաստացի կազմում է 0.14908 հա, որը Գնել Արագածի Հակոբյանին /ծնված 18.09.1991թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 271.98 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1979-1990թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.14908 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բունիաթյան 2-րդ փողոց 40 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Նաթելա Վարազդատի Հայրապետյանի /ծնված 03.12.1945թ-ին/, Գնել Արագածի Հակոբյանի /ծնված 18.09.1991թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.14908 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 271.98 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1979-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ա. Բունիաթյան 2-րդ փողոց, 40 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 հունիսի 2025 թվականի N 934-Ա

## ԳԱԲՐԻԵԼ ՄՀԵՐԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Գաբրիել Միհերի Գալոյանի կողմից (անձնագիր՝AX0616474, ՀԾՀ՝ 1914830741, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Հացառատ թաղամաս, Ազատամարտիկների փ. 21 փկղ, 8տ) Գավառ համայնքի Զարգարյան 2-րդ փողոց թիվ 23 հասցեից հյուսիս ընկած հատվածում իրականացվել է ինքնակամ կերպով շինարարական աղբի կուտակում, ինչի կապակցությամբ 2025 թվականի մայիսի 20-ին Գավառի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և 27.05.2025թ իրազեկվել է Գավառի համայնքապետարանի իրավաբանական բաժին:
2025 թվականի մայիսի 27-ին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված տուգանքի գումարի գանձման նպատակով: 09.06.2025թ. հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Քաղաքացի Գաբրիել Միհերի Գալոյանը Գավառ համայնքի Զարգարյան 2-րդ փողոց թիվ 23 հասցեից հյուսիս ընկած հատվածում իրականացրել է ինքնակամ կերպով շինարարական աղբի կուտակում:
2025 թվականի հունիսի 9-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունիսի 9-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Գաբրիել Միհերի Գալոյանը /հիմք՝ 27.05.2025թ 539928554 փոստային առաքանին/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

# ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի, ոչ սահմանված տեղերում ինքնակամ շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով:

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետի, համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, իսկ 28) կետի՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:
Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նույն օրենսգրքի 43,1-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի համայնքի ղեկավարը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներով, որոշում եմ

1. Քաղաքացի Գաբրիել Միերի Գալոյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար, որպես 2025թ.մայիս ամսին համայնքի վարչական տարածքում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարական աղբի կուտակում իրականացնելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումար:
2. Տուգանքի գումարը ենթակա է վճարման Գավառի համայնքապետարանի 900175101105 հաշվեհամարին:
3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
17 հունիսի 2025 թվականի N 935-Ա

**ՀԱՐՈՒԹԻԿ ՎԵՄԻՐԻ ԽԱՆՁՐԱՏՅԱՆԻՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Հարութիկ Վեմիրի Խանձրատյանի կողմից (անձնագիր՝002945434, ՀԾՀ՝ 2603630490, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Զարգարյան փ. 14տ) Գավառ համայնքի Զարգարյան 2-րդ փողոց թիվ 23 հասցեից հյուսիս ընկած հատվածում իրականացվել է ինքնակամ կերպով շինարարական աղբի կուտակում, ինչի կապակցությամբ 2025 թվականի մայիսի 20-ին Գավառի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և 27.05.2025թ իրազեկվել է Գավառի համայնքապետարանի իրավաբանական բաժին:
2025 թվականի մայիսի 27-ին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված տուգանքի գումարի գանձման նպատակով: 09.06.2025թ. հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ
Քաղաքացի Հարութիկ Վեմիրի Խանձրատյանը Գավառ համայնքի Զարգարյան 2-րդ փողոց թիվ 23 հասցեից հյուսիս ընկած հատվածում իրականացրել է ինքնակամ կերպով շինարարական աղբի կուտակում:
2025 թվականի հունիսի 9-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունիսի 9-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Հարութիկ Վեմիրի Խանձրատյանը /հիմք՝ 27.05.2025թ 539928742 փոստային առաքանին/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի, ոչ սահմանված տեղերում ինքնակամ շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով:

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետի, համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, իսկ 28) կետի՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:
Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նույն օրենսգրքի 43,1-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի համայնքի ղեկավարը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներով, որոշում եմ

1. Քաղաքացի Հարություն Վեմիրի Խանձրատյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար, որպես 2025թ.մայիս ամսին համայնքի վարչական տարածքում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարական աղբի կուտակում իրականացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումար:
2. Տուգանքի գումարը ենթակա է վճարման Գավառի համայնքապետարանի 900175101105 հաշվեհամարին:
3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 17
ք. Գավառ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 հունիսի 2025 թվականի N 936-Ա

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, Գավառ համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատողի հատուկ 18.06.2025թ եզրակացությունը՝ առաջարկվում է

1.Գավառի համայնքապետարանի 2025թ.բյուջեով նախատեսված 09 բաժնի 4 խմբի 1 դասի /բարձրագույն մասնագիտական կրթություն/ գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից համապատասխան ուսումնական հաստատությանը տրամադրել դրամական հատուցում Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին ուսման վարձի մասնակի մարման նպատակով

1. Նունե Արամայիսի Միրիբյան 200 000 /երկու հարյուր հազար / ՀՀ դրամ

2.Արմինե Արտավազդի Բոշյան 185 000 /մեկ հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ

3.Սերյոժա Արթուրի Շանոյան  250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 635 000/ վեց հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 18
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2025 թվականի N 937-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 08 ապրիլի 2004թ. N 459-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշմամբ, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-046-0111-0027/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.25469 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, գյուղ Ծաղկաշեն, 3-րդ փողոց, 22 հասցեն:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 18
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2025 թվականի N 938-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 13 հուլիսի 2006թ. N 1176-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշմամբ, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-001-0318-0001/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.00058 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ քաղաք, Զորավար Անդրանիկի փողոց 33/2 հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 18
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 հունիսի 2025 թվականի N 939-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 13 հուլիսի 2006թ. N 1176-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշմամբ, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-001-0312-0026/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.00280 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ քաղաք, Գ. Միքայելյան փողոց, 1/4 հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 18
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 հունիսի 2025 թվականի N 940-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՌԱԶՄԻԿ ԳՎԻԴՈՆԻ ՊԻՊՈՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16/ և 24/ կետերի դրույթներով, հիմք ընդունելով վարձակալության իրավունքով իրեն հատկացված գույքը ենթավարձակալության հանձնելու համաձայնության ստանալու մասին Ռազմիկ Գվիդոնի Պիպոյանի 17.06.2025թ. դիմումը, ***որոշում եմ***

1. Թույլատրել Ռազմիկ Գվիդոնի Պիպոյանին ենթավարձակալության հանձնելու վարձակալության իրավունքով իրեն տրամադրված Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց 2/3 առևտրի սրահ հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 18
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունիսի 2025 թվականի N 941-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Մուշեղ Վանիկի Հակոբյանին, Էլմիրա Հենրիկի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 10062025-05-0030 տրված 2025 թվականի հունիսի 10-ին, վկայական N 06062025-05-0029 տրված 2005 թվականի սեպտեմբերի 1-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Մուշեղ Վանիկի Հակոբյանին, Էլմիրա Հենրիկի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.1855 հա մակերեսով 05-001-1064-0094 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը, 0.0955 հա մակերեսով 05-001-1045-0637 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 19
ք. Գավառ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունիսի 2025 թվականի N 942-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Կարինե Հակոբի Հովսեփյանին, Գայանե Վաչագանի Շակոյանին, Լիաննա Վաչագանի Մկրտչյանին, Նորայր Վաչագանի Մկրտչյանին, Նարինե Վաչագանի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 01102015-05-0009 տրված 2015 թվականի հոկտեմբերի 1-ին, վկայական N 06102015-05-0005 տրված 2015 թվականի հոկտեմբերի 6-ին, վկայական N 01102015-05-0010 տրված 2015 թվականի հոկտեմբերի 1-ին, վկայական N 01102015-05-0022 տրված 2015 թվականի հոկտեմբերի 1-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Կարինե Հակոբի Հովսեփյանին, Գայանե Վաչագանի Շակոյանին, Լիաննա Վաչագանի Մկրտչյանին, Նորայր Վաչագանի Մկրտչյանին, Նարինե Վաչագանի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.719 հա մակերեսով 05-001-0650-0045 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը, 0.169 հա մակերեսով 05-001-0693-0153 կադաստրային ծածկագրով, 0.028 հա մակերեսով 05-001-0691-0498 կադաստրային ծածկագրով, 0.016 հա մակերեսով 05-001-0694-0023 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 19
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
20 հունիսի 2025 թվականի N 943-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 27 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԾՐՈՒՆ ԲԱԲԳԵՆԻ ԱԲԳԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 02.08.2024թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 15.05.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 27 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.22 հա, ինչը փաստացի կազմում է 0.20892 հա, որը Արծրուն Բաբգենի Աբգարյանին /ծնված 28.07.1974թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 263.70 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1970թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.20892 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 27 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արծրուն Բաբգենի Աբգարյանի /ծնված 28.07.1974թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.20892 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 263.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1970թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց, 5-րդ անցուղի, 27 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 հունիսի 2025 թվականի N 944-Ա

## ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 84 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՇԱՀՐԻԿՅԱՆԻ, ՄԱՆՈՒՇ ՍԱՇԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ՎԱՆԻԿԻ ՇԱՀՐԻԿՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՎԱՆԻԿԻ ՇԱՀՐԻԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 23.05.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 84 հասցեի գույքի համասեփականատեր Վանիկ Վոլոդյայի Շահրիկյանի /ծնված 03.01.1952թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 84 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է ընդհանուր 0.3 հա, ինչը փաստացի կազմում է 0.06917 հա, որը Վանիկ Վոլոդյայի Շահրիկյանին /ծնված 03.01.1952թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողաման է և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.06917 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 84 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Վանիկ Վոլոդյայի Շահրիկյանի /ծնված 03.01.1952թ-ին/, Մանուշ Սաշիկի Սիմոնյանի /ծնված 20.04.1958թ-ին/, Հակոբ Վանիկի Շայրիկյանի /ծնված 05.04.1979թ-ին/, Կարեն Վանիկի Շահրիկյանի /ծնված 17.08.1980թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.06917 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց, 84 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 հունիսի 2025 թվականի N 945-Ա

## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 14/60 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 09 հունիսի 2025 թվականի թիվ 7 նիստի թիվ 126-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Գոհար Վազգենի Կարապետյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 29042025-05-0077, տրված 29.04.2025թ./,
***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 14/60 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 20.10 քմ արտաքին /19.30 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00201 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1422 / մեկ հազար չորս հարյուր քսաներկու / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 29000 /քսանինը հազար / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00201 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1877.7 / մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ / ՀՀ դրամ, ընդամենը 38000 / երեսունութ հազար / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/

ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Գոհար Վազգենի Կարապետյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Գոհար Վազգենի Կարապետյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվականի N 946-Ա

## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 72 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԾԱԾԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ,ԾԱԾԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 09 հունիսի 2025 թվականի թիվ 7 նիստի թիվ 129-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Կարինե Հովհաննեսի Ղեջյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 07052025-05-0101, տրված 07.05.2025թ./,
***որոշում եմ***

1.Գավառ համայնք ք. Գավառ Ազատության փողոց 1-ին նրբանցքի 2-րդ փակուղի 72 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 23.9 քմ արտաքին /22.6 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.6 քմ մակերեսով ծածկը, ավտոտնակի, ծածկի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00261 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի, ծածկի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 874 / ութ հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 23200 /քսաներեք հազար երկու հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի, ծածկի համար առանձնացված 0.00261 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 514.8 / հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ / ՀՀ դրամ, ընդամենը 13500 / տասներեք հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ

հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Կարինե Հովհաննեսի Ղռեցյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Կարինե Հովհաննեսի Ղռեցյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 հունիսի 2025 թվականի N 947-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 111 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ «ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ» ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 25.03.2025թ. տրված «Գավառի տարածքային սպառողական կոոպերատիվի» հաշվեկշռից քաղվածքը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 19.90 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1973թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00539 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Կարմիրգյուղ Ազատության փողոց 111 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ «Գավառի տարածքային սպառողական կոոպերատիվի» հողօգտագործման իրավունքը, խանութի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով կոոպերատիվի սեփականության իրավունքը 0.00539 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք՝ համաձայն

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Կարմիրգյուղ, Ազատության փողոց, 111 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2025 թվականի N 948-Ա

**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1. մասի 11)-րդ կետով, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» 26.03.2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետով, ***որոշում եմ***

1. Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ», «Լանջաղբյուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար մրցույթները անցկացնել 2025 թվականի օգոստոսի 15-ին:
2. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմին՝ իրականացնելու «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ», «Լանջաղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2025 թվականի N 949-Ա

**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ», «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ», ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1. մասի 11)-րդ կետով, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» 26.03.2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետով, ***որոշում եմ***

1. Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Գանձակի մշակույթի տուն», «Նորատուսի արվեստի դպրոց», համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար մրցույթները անցկացնել 2025 թվականի օգոստոսի 14-ին:
2. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմին՝ իրականացնելու «Գանձակի մշակույթի տուն», «Նորատուսի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
23 հունիսի 2025 թվականի N 950-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 71 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 09 հունիսի 2025 թվականի թիվ 7 նիստի թիվ 127-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Հարազատ Գոդոլի Գրիգորյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 07052025-05-0086, տրված 07.05.2025թ./,
***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի 71 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 31.20 քմ արտաքին /28.80 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00312 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 / մեկ հազար երկու հարյուր ինը / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 37800 /երեսունյոթ հազար ութ հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00312 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1221 / մեկ հազար երկու հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ, ընդամենը 38200 / երեսունութ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000

/երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հարազատ Գոդոլի Գրիգորյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Հարազատ Գոդոլի Գրիգորյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 20
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2025 թվականի N 951-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 72 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 09 հունիսի 2025 թվականի թիվ 7 նիստի թիվ 128-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Հարազատ Գոդոլի Գրիգորյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 07052025-05-0072, տրված 07.05.2025թ./,
***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ փակուղի 72 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 31.30 քմ արտաքին /28.80 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00313 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 / մեկ հազար երկու հարյուր ինը / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 37900 /երեսունյոթ հազար ինը հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00313 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1221 / մեկ հազար երկու հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ, ընդամենը 38300 / երեսունութ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000

/երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հարազատ Գոդոլի Գրիգորյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Հարազատ Գոդոլի Գրիգորյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2025 թվականի N 952-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշմամբ, ***որոշում եմ***

1. Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 21102016-05-0016/ կրպակի Գավառ քաղաք, Բոշնաղյան փողոց 18 հասցեն վերահասցեավորել և տրամադրել Գավառ քաղաք, Ա. Բոշնաղյան փողոց, 8/1 հասցեն:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2025 թվականի N 953-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 16-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՐՏԱԿ ԿՈԼՅԱՅԻ ԱՂԵԿՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՔԻ ԲՈՒԴՈՒՄՅԱՆԻ, ԷՄՄԱ ՍՊԱՐՏԱԿԻ ԱՂԵԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 04.06.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 16-րդ նրբանցք 4 հասցեի գույքի համասեփականատեր Սպարտակ Կոլյայի Աղեկյանի /ծնված 10.06.1966թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 16-րդ նրբանցք 4 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08567 հա, որը Սպարտակ Կոլյայի Աղեկյանին /ծնված 10.06.1966թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 193.3 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1985թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08567 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 16-րդ նրբանցք 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սպարտակ Կոլյայի Աղեկյանի /ծնված 10.06.1966թ-ին/, Վարդանուշ Ավետիքի Բուդումյանի /ծնված 24.11.1972թ-ին/, Էմմա Սպարտակի Աղեկյանի /ծնված 29.06.1990թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08567 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 193.3 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1985թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2023թ-ին ինքնակամ կառուցված 37.75 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը և պարիսպը ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց, 16-րդ նրբանցք, 4 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2025 թվականի N 954-Ա

### ԱԶԱՏ ՄԻՐԱՆԻ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԹԱՄԱՐԱ ՀԱՅԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 23.06.2025թ. նիստի արձանագրությունը, ***որոշում եմ***

1. Չափահաս սահմանափակ գործունակ քաղաքացի Ազատ Միրանի Բալաբեկյանի /ծնված՝ 09.12.1983թ., անձնագիր՝ 003095494, տրված՝ 15.06.2015թ./ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով նրա մորը՝ Թամարա Հայկի Մանուկյանին /անձնագիր՝ 016036493, տրված՝ 31.05.2024թ. 040-ից/ նշանակել նրան հոգաբարձու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գավառ